



### ԱՔՐԱՀԱՄ ԽՈՍՏՈՎԱՆՈՂԸ ԵՎ ԻՐ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Աքրահամ Խոստովանողը հինգերորդ դարի հայ մատենագրության նշանավոր դեմքերից է՝ հմուտ թարգմանիչ և պատմագիր: Ծնորհիվ Եղիշեի<sup>1</sup> և Փարպեցու<sup>2</sup>, նրա մասին պահպանված են բավականաչափ արժեքավոր տեղեկություններ, որոնք սակայն հայագիտության կողմից գնահատված են ոչ հավասարապես<sup>3</sup>: Փարպեցին համարվում է Աքրահամի կենսագրության արժանահավատ աղբյուր, Եղիշեն՝ անվավեր: Նման տպավորության պատճառն այն է, որ Եղիշեի պատումն Աքրահամի մասին ընթանում է վկայաբանություններին բնորոշ միջոցներով: Այստեղ կան ջատագովական երկխոսություններ, զանազան չարչարանքների նկարագրություններ, գնահատականների կամքի գովերգում և այլն: Սակայն Եղիշեի պատմության փաստական կողմը ոչնչով չի հակասում Փարպեցու տեղեկություններին: Այս չափազանց արժեքավոր աղբյուրները պարզապես լրացնում են մեկը մյուսին:

Աքրահամ Խոստովանողն «եր ի գաւառէն Տայոց, ի գեղջէն, որում անուն էր Ջենակս»<sup>4</sup>, այդ պատճառով նա հաճախ հայագիտական գրականության մեջ կոչվում է Աքրահամ Ջենակացի<sup>5</sup>: Ծնվել է մոտավորապես հինգերորդ դարի սկզբին, որովհետև, ամենայն հավանականությամբ, նա մեկն է Սահակ-Մեսրոպ: Նրա դպրոցի առաջին աշակերտներից, չնայած այդ մասին տեղեկացնում են միայն 13-րդ դարի պատմիչներ Կիրակոս Գանձակեցին և Վարդան Արևելեցին<sup>6</sup>: «Վկայք Արևելից» ժողովածուի հայերեն թարգմանության գերազանց մակարդակը վկայում է այն մասին, որ նրա հեղինակը կատարելապես տիրապետել է ասորերենին և ընդհանրապես եղել է գիտուն և զարգացած մարդ: Իսկ այսպիսի նվաճումն, իհարկե, ենթադրում է երկարատև և կանոնավոր կրթություն: Ուստի Աքրահամի պատկանելությունը հայ «երիցագույն թարգմանիչների» խմբին պետք է համարել անտարակուսելի:

<sup>1</sup> Եղիշեի վաճառի վարդանայ և Հայոց պատերազմին. ի լոյս ածեալ Ե. Տեր-Մինասեան. Երևան, 1957. էջ 183—192: Այս հատվածը ճառընտիրներում հանդիպում է առանձին՝ «Պատմութիւն սուրբ Խոստովանողացն Աքրահամու և Խորենայ» վերնագրով: Տե՛ս, Մատենադարան, ձեռ. № 1ր, թերթ 777—781 (Ն. եպսկ. Պողոսեան, Մայր ցուցակ, Երուսաղեմ, հ. 1, 1966 թ.):

<sup>2</sup> Դնգարայ Փարպեցույ Պատմութիւն Հայոց, աշխ. Գ. Տեր-Մկրտչեան և Ստ. Մալխասեանց, Տիֆլիս, 1904, էջ 94 և 105—108:

<sup>3</sup> Տե՛ս, Աքրահամու Խոստովանողի՝ Վկայք Արևելից, Էջմիածին, 1921 թ., էջ 12, հրատ. Գ. Տեր-

Մկրտչեան: Գարագաշեան Ա. Մ., ԲՃՆ. պատմ. Հայոց, մասն Դ, Թիֆլիս, 1895, էջ 207—212:

<sup>4</sup> Փարպեցի, նշվ. աշխ., էջ 94:

<sup>5</sup> Չպետք է շփոթել Աքրահամ սարկավագ Արածացու հետ (Եղիշե, նշվ. աշխ., էջ 179): Այսպիսի սխալ կատարված է Թովմա Արծրունու պատմության մեջ և Եղիշեի պատմության Ե. Տեր-Մինասյանի հրատարակության անվանացանկում:

<sup>6</sup> Կիրակոս Գանձակեցի, Պատմ. Հայոց, հրատ. Կ. Մելիք-Ռեանցյանի, Երևան, 1961, էջ 28:

Հուաբունն պատմութեան Վարդանայ Վարդապետի, Վենետիկ, 1862 թ., էջ 51:

Արրահամի մասին այլևս ոչինչ հայտնի չէ մինչև վարդանանց պատերազմը, բացի այն բանից, որ նա այդ ժամանակ ուներ քահանայի աստիճան<sup>7</sup>: Ապրտանությունը պարտությունից հետո Արրահամը իր ընկերոջ՝ Խորենի հետ կամավոր կերպով հետևում է գերված հայ նախարարներին և Ղևոնդյանց քահանաներին՝ նրանց անհրաժեշտ ծառայություններ մատուցելով: Նրանք ձերբակալվում են և Ղևոնդյանց նահատակության ժամանակ բանտարկվում Ապար աշխարհի Նյուշապահ քաղաքում<sup>8</sup>:

Արրահամի և Խորենի անմեղությունը հաստատելուց հետո, նրանց առաջարկվում է հավատափոխ լինել և մեծ պատիվներով վերադառնալ հայրենիք<sup>9</sup>: Նրանք կտրականապես հրաժարվում են և արիաքար տանում անմարդկային տանջանքները<sup>10</sup>: Այնուհետև կտրում են նրանց ականջները և ուղարկում Ասորեստան աշխարհի Ծապուհ գավառը որպես արքունի մշակներ<sup>11</sup>: Շրջակայքի քրիստոնյաները նրանց անմիջապես վերցնում են իրենց հովանավորության տակ: Նրանք կազմակերպում են նվիրատվություն-

ներ, հավաքում են մեծ գումարներ, որոնցով Արրահամը և Խորենը օգնում են Ապար աշխարհում աքտորված հայ նախարարներին<sup>12</sup>: Սի տարի անց Խորենը, չդիմանալով տաժանակրության ծանր պայմաններին, մահանում է<sup>13</sup>: Արրահամը շարունակում է իր առաքելությունը «մինչև լերկոտասաներորդ ամս պատժաւորացն» (463 թ.), երբ նախարարների խնդրանքով վերադառնում է Հայաստան<sup>14</sup>: Ըստ Փարպեցու, նրան երաշխավորությամբ ազատում են «հաւատացեալք աշխարհին»<sup>15</sup>: Վերադառնալուց հետո Արրահամը, հավանաբար, երկար չի ապրում, որովհետև նրա մահվան մասին հիշատակվում է արդեն Եղիշեի պատմության<sup>16</sup> մեջ, որը, ինչպես հայտնի է, գրված է հինգերորդ դարի 80-ական թվականներին:

Արրահամի հետաքրքրյալ գործունեության մասին Եղիշեի և Փարպեցու տեղեկությունները տարբերվում են իրարից: Եղիշեն պատմում է, թե ընկերացի իր տեղի մի զատ յամենայն բազմամբոխ ժողովրդոց և առաքինի եղբարքք երիւք կատարեաց զկեանս իր մեծաւ ճգնութեամբ<sup>17</sup>, իսկ Փարպեցին. «Եւ ձեռնադըրեալ յաստիճան եպիսկոպոսութեան աշխարհին Բզնունեաց՝ բազում ուղղութեանց աշխարհին մարդկան լինէր ուսուցիչ, և վախճանէր ի մեմն կարգի ի բարոյք ձերութեան»<sup>18</sup>: Դժվար է նախապատվություն տալ այս տեղեկություններից մեկին՝ չունենալով ոչ մի հակաճանաչություն մյուսի դեմ: Այդ պատճառով, չի կարելի նաև Արրահամին հաստատապես նույնացնել Փարպեցու «Թղթում» հիշատակվող համանուն եպիսկոպոսի հետ<sup>19</sup>:

Այսպիսով, Արրահամ Խոստովանողի կենսագրության համարյա բոլոր հանգամանքները պարզ են, բացի մի կարևոր հարցից, որը մեծ նշանակություն ունի ինչպես հայոց, այնպես և պարսից իրավունքի և հասարակական-տնտեսական հարաբերությունների պատմության համար: Խոսքը վերաբերում է Փարպեցու հետևյալ հիշատակությանը, որը լուրջ վեճի առարկա դարձավ Մանանդյանի և Սամվելյանի միջև. «Նշակութին արասցեն ընդ արքունի մշակսն և ի հարկի կայցեն մինչև ցվախճան իրեանց»<sup>20</sup>:

Նահանդյանի կարծիքով, Արրահամը և Խորենը դատապարտված էին մինչև մահ՝ լինել արքունի հարկատու մշակներ: Այդ պատճառով, Արրահամին ազատելու համար տեղացի քրիստոնյաները երաշխա-

<sup>7</sup> Փարպեցի, նշվ. աշխ., էջ 94, 105: Տեր-Պողոսյանի կարծիքով Արրահամը քահանա էր արդեն 442 թվին, Հազկերտ Բ-ի Քուշանաց արշավանքի ժամանակ («Հանդես ամսօրեայ», 1895 թ., էջ 113):

<sup>8</sup> Եղիշե, նշվ. աշխ. 183: Փարպեցի, նշվ. աշխ., էջ 94:

<sup>9</sup> Փարպեցի, նշվ. աշխ., էջ 105:

<sup>10</sup> Եղիշե, նշվ. աշխ., էջ 186:

<sup>11</sup> Փարպեցի, նշվ. աշխ., էջ 105: Եղիշե, նշվ. աշխ., 186—187: Ծապուհ գավառի անունը աղավաղված է, թե Եղիշեի պատմության ձեռագրերում, թե Փարպեցու. «Եւ տարան հասուցին զնոսա յերկիրն քաքեւացոց, ի գաւառ մի, զոր Ծախողն (Ծախող, Ծաւող, Ծախող) անուանեն»—Եղիշե, նշվ. աշխ., էջ 187: «Ետուն տանել յԱսորեստան, ի գաւառն որ անուանեալ կոչի Ծախուլ (Ծախուլ)»—Փարպեցի, նշվ. աշխ., էջ 106: Օրմանյանն առաջարկում է ուղղել Ծախուր (Ազգապատում, հ. Ա, Կ. Պոլիս, 1912 թ., էջ 414): Մեզ թվում է՝ ճիշտ է Ծապուհ: Ծապուհ սասանյանների ժամանակ պաշտոնապես կոչվում էր Քաշկար գավառը, որը մտնում էր Ասորեստան (Սորիստան) նահանգի, որ է հարելուն կամ Բեթ-Արամայե, կազմի մեջ՝ Խուժաստանի և Մեշանի հարևանությամբ: Եղիշեն այլ հասկանում ճշգրիտ կերպով որոշում է այդ գավառի տեղադրությունը. «Անդադար էին ի ճանապարհորդութեան ընդ նոյն Ծախուլ, ընդ Մեշովն և ընդ Քաշկար և ընդ ամենայն Ասորեստան և Խուժաստան»—Եղիշե նշվ. աշխ., էջ 188: Եղիշեի այս աշխարհագրական ակնարկը բացարձակապես հաստատում է, որ Ծախուլ աղավաղված անվան տակ ենթադրվում է Պարսից Ծապուհ գավառը: Հետևաբար պետք է Եղիշեի պատմության տեքստում վերականգնել Ծապուհ նախնական ձևը, նույնիսկ առանց խախտելու հրատարակության տեքստաբանական սկզբունքները, որովհետև ձեռագրերից մեկում պահպանված է Ծապուխ ընթերցվածը: (Տե՛ս, Եղիշե, նշվ. աշխ., էջ 187, ձեռ. Բ):

<sup>12</sup> Եղիշե, նշվ. աշխ., էջ 187—188, Փարպեցի, նշվ. աշխ., էջ 106:

<sup>13</sup> Փարպեցի, նշվ. աշխ., էջ 106: Ըստ Եղիշեի Խորենը մահանում է տասը տարի անց (Եղիշե, նշվ. աշխ., էջ 188):

<sup>14</sup> Եղիշե, նշվ. աշխ., էջ 188:

<sup>15</sup> Փարպեցի, նշվ. աշխ., էջ 106:

<sup>16</sup> Եղիշե, նշվ. աշխ., էջ 192:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 191:

<sup>18</sup> Փարպեցի, նշվ. աշխ., էջ 106:

<sup>19</sup> Տե՛ս Միսքեան Յովհ., «Հանդես ամսօրեայ», 1902 թ., էջ 80: Նաև՝ Արր. Խոստ. Վկայք Արև. Առաջաբան, էջ 13:

<sup>20</sup> Փարպեցի, նշվ. աշխ., էջ 105:

վորում են վճարել Գրանցի հասանելիք հարկը, և, հավանաբար, հավատացյալների այս երաշխավորությունն ունեցել է «համերաշխիքի բնույթ»<sup>21</sup>: «Իսկ երանելի երեցն Արրահամ, երաշխատություններ հաւատացելոց աշխարհին, որք գտունս իրեանց և զարարըս փոխանակ ընդ հարկի նորս գրեցին յարքունիս ցվախճան նորս, և կատարեցին զկարգեալսն անվեհեր յաղագս նորս»<sup>22</sup>:

Սամվելյանը, ելնելով հարկ բառի երկակի նշանակությունից, կարծում է, որ «ի հարկի» պետք է հասկանալ ոչ թե հատուցանելի հարկի առումով, որը գրված կլիներ «ի հարկի ծառայություն» խոսքերով, այլ նշանակում է հարկադրանք, բռնի ստիպումն հարկադրական ճնշումն, և հետևաբար «արքունի մշակ» արտահայտության մշակ բառը նշանակում է ստրուկ, որը պետք է կատարեր արքունական ծանր աշխատանք: Իր տեսությունը հաստատելու համար Սամվելյանը բերում է հետևյալ երկու ապացույցները.

ա) Հավատացյալները չէին կարող երաշխավորել Արրահամին ցմահ հասանելիք հարկի հատուցումը, որովհետև անհնարին էր որոշել այդ հարկի չափը՝ չհնանալով, թե որքան պիտի տներ նրա կյանքը: Ուրեմն, նրանք Արրահամին պարզապես փրկագներ են, իսկ փրկագնով ազատվել կարող էին միայն ստրուկները և ոչ թե շինականները կամ ճորտները, որոնք անպայման կապված էին հողի հետ:

բ) Հին աշխարհում ստրկությունը կիրառվում էր նաև իբրև պատժական միջոց, մեծապես ստրուկներին խարում էին: Ուստի, պետք է ենթադրել, որ Արրահամն ու խորենը իբրև քաղաքական հանցագործներ, թագավորի դեմ ըմբոստներ, ենթարկվում են խտրազույց պատժի՝ ստրկության, որի համար էլ խարվում են (կտրում են նրանց ականջները)<sup>23</sup>:

Մեզ թվում է, թե բոլորովին չի կարելի համաձայնել Սամվելյանի կարծիքին: Նախ և առաջ, նրա տեսությունը փրկագնան մասին հիմնված է ոչ թե ողորակի Փարպեցու հաղորդման, այլ պարզ ենթադրության վրա: Փարպեցին որոշակիորեն ասում է. («Հաստացելաք աշխարհին») գտունս իրեանց և զարարս փոխանակ ընդ հարկի նորս գրեցին յարքունիս ցվախճան նորս»<sup>24</sup>: Իսկ փրկագնամը, ինչպես հայտնի է, ենթադրում է համապատասխան գումարի վճարում, որով չափվում է ստրուկի արժեքը: Եվ երկրորդ, «ի հարկի» Փարպեցու մոտ նշանակում է միմիայն հարկատու: Այդ ապացույցն ի համար բավական է բերել մի քանի օրինակ «Վկայք Արևելից» ժողովածուի հայերեն թարգմանությունից. Ասորերեն՝ ܘܡܐ ܕܥܘܠܡܐ... ܐܠ ܕܥܡܐܢ Գալատացիությունը<sup>25</sup>, որ նշանակում է «Սլավեց մեր ժողովրդի ստրկացումը», հա-

յերեն թարգմանված «Արևիկն ի հարկ գրիստուցնալս»<sup>26</sup>: Թվում է, թե իրավացի է Սամվելյանը: Սակայն, այն մասին, որ «արևիկն ի հարկ» չի կարելի հասկանալ որպես «ստրկության կամ հարկադրանքի տակ» վկայում է մի ուրիշ օրինակ<sup>27</sup>: Ասորերեն «eik'beš b'madana» (նշվեց հարկերով) նախադասությունը հայերեն թարգմանված է ճիշտ այնպես, ինչպես նախորդը. «արևան ի հարկս»<sup>28</sup>: Այստեղ արդեն բոլորովին չի կարելի կապանել հարկ բառի նշանակության վրա, որովհետև ասորերեն madana նշանակում է միմիայն հարկ: Ուստի պետք է ենթադրել, որ ընդհակառակն, հինգերորդ դարում ասորերեն ܕܘܥܡܐܢ ܕܥܘܠܡܐ ܐܠ ܕܥܡܐܢ ստրկացում և հարկադրանք նշանակությունների կողքին, ունեցել է նաև հարկի իմաստ: Այս բանի ապացույցը ևս մենք հեշտությամբ գտնում ենք «Վկայք Արևելից» ժողովածուում: Այսպես, ասորերեն 'aqel nira damša'b'de (թեթև վարքեց (կամ վերադրեց) ստրկության լուծը)<sup>29</sup> հայերեն թարգմանված է. «եքսթ գլոմ հարկացն»<sup>30</sup>, կամ՝ «nira d'ša'badkon 'al kaipar la simiu hnan. (Ձեր՝ ստրկության լուծը մենք չենք վերցնի մեր ունեի վրա)»<sup>31</sup> թարգմանված է «զհարկսդ, գոր եղիք, մեք յանձն ոչ առնումք»<sup>32</sup>: Ինչպես տեսնում ենք, բոլոր այս օրինակներում հարկ բառը ունի ոչ թե հարկադրանքի, այլ հարկատվության նշանակություն:

Բացի այդ, Սամվելյանի ենթադրությունը չի պատասխանում նաև հետևյալ հարցերին.

— Եթե Արրահամը ստրուկ լիներ, ինչպե՞ս կարող էր այդպիսի գործուն օգնություն ցույց տալ աքսորյալ նախարարներին:

— Եթե Արրահամը ստրուկ լիներ, ինչպե՞ս կարող էր այդքան ժամանակ գտնել՝ թարգմանելու համար «Վկայք Արևելից» ժողովածուի պես հսկա մի աշխատություն:

Այնպիսով Սամվելյանի տեսությունը Արրահամի և խորենի ստրկության մասին, չի հաստատվում որևէ փաստով, այնինչ Մանանդյանի կարծիքը, որը պատճառաբանված է Փարպեցու վավերական հավաստմամբ, մնում է միակ ընդունելից:

\* \* \*

Նշիշեն և Փարպեցին ոչինչ չեն հաղորդում Արրահամի գրական գործունեության մասին: Սակայն այս հանգամանքը չի խանգարել հայագիտության մեջ միաանական կարծիքի ստեղծմանը այն մասին, որ Ար-

վոնի վկայաբանությունը), Patrologia Syriaca, pars I, t. II, p. 727: (Այսուհետև՝ Kmosko-PS):

<sup>26</sup> Գ. Տեր-Մկրտչեան. Արրահամայ խոստովանողի վկայք Արևելից, Էջմ.—1921 թ., էջ 104: (Այսուհետև՝ ԳՏՄ):

<sup>27</sup> Kmosko-PS, p. 726.

<sup>28</sup> ԳՏՄ, էջ 104:

<sup>29</sup> Kmosko-PS, p. 734.

<sup>30</sup> ԳՏՄ, էջ 108:

<sup>31</sup> Kmosko-PS, p. 734.

<sup>32</sup> ԳՏՄ, էջ 108:

<sup>21</sup> Մանանդյան Հ., Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երևան, 1934 թ., էջ 157—158:

<sup>22</sup> Փարպեցի, նշվ. աշխ., էջ 106:

<sup>23</sup> Խ. Սամուելեան, Հին հայ իրավունքի պատմություն, հ. Ա, Երևան, 1939 թ., էջ 289—291:

<sup>24</sup> Փարպեցի, նշվ. աշխ., էջ 106:

<sup>25</sup> Michael Kmosko, S. Simeon bar Sabba'e (Ծնա-

րահամ Խոստովանողը հանդիսանում է «Վկայք Արևելից» ժողովածուի հայ թարգմանիչը<sup>33</sup>: Այդ կարծիքը լրջորեն հիմնավորված է հետևյալ աղբյուրների վկայությամբ:

1. Թովմա Արծրունու Պատմությունը: «Շապուրի արքայից արքայ թագաւորեալ՝ բազում և անշափ չարիս հասուցանէր ի վերայ Հայոց աշխարհիս և Սասնաւանեաց և Պաղեստինացոց... // որպէս ընթեռնուք ի գիրս պատմութեան վկայելոցն, որ Արևելեայ ասի գրոցն վերագրութիւն, զոր շարագրեաց երանելի խոստովանողն Քրիստոսի Աքրահամ ի գեղջէն Արածոյ, որ էր աշակերտ և հետևող սրբոց Ղևոնդեանց, և զապաւուց քան թէ յովից գրեաց անուանս ի յիշատակարանի անդ, զՇահրուտդ, որ թարգմանի արքայաւեր, և զԳոհշթասոյ, որ թարգմանի ներկագործ ծիրանեաց արքայական զգեստու, և զՇմաւոն եպիսկոպոս, վէմ եկեղեցւոյ Քրիստոսի, ընդ նմին և այլ եպիսկոպոսք և քահանայք, արք Ծ, որ կատարեցան միանգամայն սրով ի միում արուր ի մեծի ուրբաթի զատկիին»<sup>34</sup>:

IX—X դդ. հեղինակի հաղորդումը չորսդարյա հնություն ունեցող իրադարձությունների մասին, իհարկև, կարող է թվալ անհամոզիչ, սակայն, տվյալ դեպքում ասիք չկա կասկածելու որս արժանահավատության վրա: Թովման շատ լավ ծանոթ է «Վկայք Արևելից» ժողովածուին, հնտորեն վերլուծում է այն և ճշգրիտ կերպով վերարտադրում նահատակների խթոթն անունները: Այս ամենը վկայում է, որ նրա հաղորդումը պատահական չէ, նա կարդացել է այդ ժողովածուն և գիտե նրա թարգմանչին: Այնհաստի է, որ Աքրահամի հեղինակության մասին Թովմայի տեղեկությունը հնարված չէ իր կողմից, այլ քաղված է ավելի հին աղբյուրից, կամ պարզապես ժողովածուի այն օրինակը, որ Թովման ուներ իր ձեռքին, կրում էր Աքրահամի անունը:

2. Մատենադարանի № 998 Ճառընտիրը (1456 թ.) Այս ձեռագիրը բազմաթիվ այլ երկերի շարքում, պարունակում է նաև մի հատված «Վկայք Արևելից» ժողովածուի նախաձևոցից, հետևյալ վերնագրով. «Երանելոյն Աքրահամու Խոստովանողին ասացեալ ի վկայսն արևելից»<sup>35</sup>: Այս տեղեկությունը նույնպես ունի մեծ արժեք, հատկապես այն պատճառով, որ Աքրահամի հեղինակությունը հավաստված է այնպես, ինչպես ամփոփաբար նշանակվում են ճատերի հեղինակները հայկական ճառընտիրներում: Տեղեկությունը գնահատելի է նաև նրանով, որ այն չի ծա-

<sup>33</sup> «Վկայք Արևելից»-ը վկայաբանությունների մի ժողովածու է, որտեղ նկարագրված են պարսից քրիստոնյաների չորրորդ դարում կրած հալածանքները: Ատորագիտության մեջ առայժմ խնդրական է ժողովածուի հեղինակի հարցը: Դեռևս տիրապետող չի դարձել Մարտիրոս Նիսիկեացու հեղինակության մասին եղած կարծիքը:

<sup>34</sup> Թովմայի վարդապետի Արծրունու Պատմություն տանն Արծրունեաց, Ս.-Պետերբ., 1887, էջ 64—65:

<sup>35</sup> Հատվածը հրատարակված է ԳՏՄ, էջ 22—25, 27—34:

գում Թովմայի վերոհիշյալ հաղորդումից, ոչնչով կախված չէ նրանից, որովհետև Թովմայի մոտ Աքրահամի «Վկայք Արևելից» ճառի մասին հիշատակություն չկա:

3. Հայերեն թարգմանված օտար պատմագիրների ցանկը հրատարակված «Ազդարարում» Հակոբ Այուբյանցի կողմից<sup>36</sup>: Ցանկում թվարկված են հնադարում հայերեն թարգմանված օտար հեղինակների ստեղծագործությունները, որոնց մեջ, ինչպես սպասելի էր, գտնվում է նաև. «Արևելեան վկայիցն պատմութիւնք, զոր թարգմանեցաւ սրբոյն յԱքրահամու Խոստովանողէ մինչ քանդարկեալ կայր ի պարսիկս ասկս խոստովանութեան Սրբոյ հաստոյ ի պարսից լեզուէ»: Այնհաստ է, որ սա բոլորովին ինքնուրույն, վերոհիշյալ տեղեկություններից անկախ վկայություն է: Նա որևէ կապ չունի ոչ Թովմայի, ոչ Ճառընտրի հաղորդումների հետ: Նրանց ի տարբերություն, այստեղ առաջին անգամ նշվում է, որ Աքրահամը ոչ թե հեղինակել, այլ թարգմանել է «Վկայք Արևելից» ժողովածուն:

Աղբյուրը, ըստ որի Այուբյանցը կազմել է իր ցանկը, անհայտ է, հավանաբար կորած է XVIII դարի վերջում, կամ գուցե դեռ պահպանվում է հայկական հազարավոր ձեռագրերից մեկում, որոնց ոչ կատարյալ նկարագրությունը հնարավորություն չի տալիս գտնել այն: Այուբյանցը բացահայտորեն օգտված պետք է լինի ինչ որ հնագույն աղբյուրից, որը, ինչպես տեսանք, չէր կարող լինել ոչ Թովմայի պատմությունը, ոչ Մատենադարանի ճառընտիրը: Ոչ մի հիմք չկա չհավատալու Այուբյանցի բարեխղճությանը, որովհետև նրա բերած համարյա բոլոր տեղեկությունները համապատասխանում են իրականությանը:

4. Էակաց գիրքը<sup>37</sup>: Այս հնագույն անվավերականի մեջ պատմվում է, որ Մահակն ու Մեսրոպը Թեոդոս կայսեր մոտ են ուղարկում «Իստի» անյաղի կոչեցեալ փիլիսոփայ և Մովսէս քերթողահայրն, իմաստասերն Մամբրէ և հոնտորն Աքրահամ, և սոցին նմանակից Պաղոս»: Թեոդոսն, իր հերթին, նրանց ուղարկում է Աթենք՝ կատարելագործվելու: Այնուհետև գրքում ավելացվում է «Արարին և Մամբրէ և Պաղոս և Աքրահամ ճառս ոչ ասկասս պէսպէս խորհրդոց»: Այս տեղեկությունը անմիջականորեն «Վկայք Արևելից» ժողովածուին չի վերաբերում, սակայն կարևոր վկայություն է այն մասին, որ հնում Աքրահամը հռչակված էր որպես թարգմանիչներից դասակից<sup>38</sup>:

Ինչպես տեսնում ենք, բերված վկայությունները, որոնք պարունակվում են իրարից անկախ աղբյուրներում, սպացուցում են, որ, իսկապես, «Վկայք Արևելից» ժողովածուի թարգմանիչն է Աքրահամ Խոստովանողը: Եվ ընդհանրապես, նույնիսկ ստանց այս

<sup>36</sup> «Ազդարար», 1795 թ., № 8, էջ 191:  
<sup>37</sup> Հրատարակված Սիմեոն Ջուղայեցու «Տրամարանութեան» մեջ, Կ. Պոլիս, 1728, էջ 154—175: Նաև՝ Գարեգին եպիսկ. Սրվանձտեան, Հնոց-նորոց, Կ. Պոլիս, 1874 թ., էջ 32—37:  
<sup>38</sup> Տես, ԳՏՄ, առաջարան, էջ 13:

վկայությունների օգնությամբ, հայ մատենագրության պատմության մեջ դժվար է գտնել որևէ հեղինակ՝ ալեյի պատշաճ նման դերի, քան Աբրահամը: Ինչպես վերևում նշվեց, Աբրահամն ինքը «կենդանի մարտիրոս»<sup>39</sup> էր, գանահարված, այլանդակված, երկար ժամանակ տառապել էր բանտում, ապրել տաժանակրության մեջ, և, որ նշանակալից է, հենց այն վայրերում, որտեղ հարյուր տարի առաջ մոլեգնում էր քրիստոնյաների նկատմամբ պարսից արյունոտ հալածանքը: Աբրահամը հավանաբար ծանոթ էր շատ ասորիների, որոնք կարող էին թարգմանության համար նրան հանձնարարել «Վկայք Արևելից» ժողովածուն: Այս առթիվ կարելի է հիշատակել Եղիշեի հաղորդումը, ըստ որի, Նյուշապուհում հայերի հետ բանտարկված էին նաև «ասորեստամեայք քրիստոնեայք արք հինգ»<sup>40</sup>: Բացի այդ, Ասորեստանում Աբրահամը շարունակ շփվում էր տեղի քրիստոնյաների հետ, որոնք նույնպես ասորի էին:

Կարևոր նշանակություն ունի նաև Եղիշեի մի այլ հաղորդում, որը մեր կարծիքով, ուղղակի ակնարկ է այն մասին, թե Աբրահամը խորապես տեղյակ էր արևելից վկաների պատմությանը և ընդունակ էր վերարտարելու նրանց տանջանքներն ու չարչարանքները, ոգու արիությունն ու աննկուն կամքը: Պատահական չէ, որ աքսորյալ հայ նախարարները հենց Աբրահամին են ընտրում՝ Հայաստան ուղարկելու համար, որպեսզի նա իր նահատակի կերպարով, իր օրհնություններով և խրատներով մխիթարի տարաբախտ հայությանը<sup>41</sup>:

\* \* \*

«Վկայք Արևելից» ժողովածուի հայ թարգմանչի անձնավորությունը որոշելուց հետո, կարևոր նշանակություն ունի նաև թարգմանության ժամանակի հարցը: Դրա ճշգրտումը հնարավորություն կտա լուծելու հայ մատենագրության մի շարք բանասիրական խնդիրներ կապված, հատկապես, Եղիշեի պատմության թվագրման հետ: Բացի այդ, «Վկայք Արևելից»-ի հայերեն թարգմանության ժամանակի որոշումը սկզբունքային նշանակություն ունի նաև նրա ասորերեն բնագրի տեքստաբանական և կառուցվածքային խնդիրների լուծման համար:

Համընդհանուր կարծիքով, Աբրահամը «Վկայք Արևելից» ժողովածուն թարգմանել է 454—468 թթ., երբ գտնվում էր պարսկական գերության մեջ: Վերոհիշյալ աղբյուրներից միայն Այուբյանցի ցուցակն է վկայում այդ մասին. «Արևելեան վկայիցն պատմութիւնք, գոր թարգմանեցաւ արքոյն յԱբրահամու Խոստովանողէ մինչ բանդարկեալ կայր ի պարսիկա...»<sup>42</sup>: Իսկ XIX—XX դդ. հայագետներից միայն Կյուլեսերյանն ու Անդրիկյանն են փորձել քաջատրել այդպիսի որոշման ճշտությունը: Առաջինի կարծիքով, Աբրահամը՝ 464-ին արդեն թարգմանած պիտի լիներ

«Վկայք Արևելիցը», քանի որ աքսորից վերադառնալուց հետո «եսպիկուպոս եղալ, և այս գրադեցուցիչ պաշտոնի թերմամբ, մանավանդ ծեր և խոնջ, չէր կարող նվիրվել թարգմանության»<sup>43</sup>: Նախ և առաջ պետք է նշել, որ Աբրահամը հայերենի վերադարձով ոչ թե 464, այլ 468 թվականին: Երկրորդ՝ Կյուլեսերյանը չի որոշում թարգմանության ժամանակի սկզբնական տարեթիվը, որը նույնպես կարևոր նշանակություն ունի: Այնուամենայնիվ նրա կարծիքը Աբրահամի հետաքսորյան շրջանում թարգմանություններով զբաղվելու անընդունակության մասին, համոզիչ է: Աբրահամը աքսորից հետո այնքան երկար չապրեց, որ կարողանար իրականացնել այդպիսի մեծ աշխատանք:

Անդրիկյանը, ընդհակառակն, հաջողությամբ որոշում է այն ժամկետը, որից առաջ Աբրահամի թարգմանությունը չէր կարող իրականանալ: Նա համեմատում է Օմալիկի վկայաբանության հայերեն թարգմանության մի հատված ասորերեն բնագրից կատարված քառացի լատիներեն թարգմանության համապատասխան տեղի հետ և նրանց միջև նկատելով մեծ տարբերություն՝ եզրակացնում է, որ այդ հատվածը Աբրահամի կողմից փոխառված է Աֆրաստի «Ջգոն» կոչված գրքի հայերեն թարգմանությունից<sup>44</sup>: Իսկ Աֆրաստի երկը (որը հայ մատենագրության մեջ վերագրված է Հակոբ Մծբնեցուն), ինչպես հայտնի է, հայերենի թարգմանված է հինգերորդ դարի առաջին կեսին<sup>45</sup>:

**Ծնատնի վկ. հայ. թարգմ.**

...ոչ ետուն նոցա ճարակել զճարակս կոխեալս և ոչ ետուն ըմպել զջուրս պղտորս և սմբակահամս<sup>46</sup>:

**Աֆրաստ**

Եւ խաշինք իմ զկոխեալսն ոտից ձերոց ճաշակեին և զջուրս պղտորեալս ի ձէնջ զսմբակահամսն ըմպեին<sup>47</sup>:

**Ծնատնի վկ. ասոր. բնագիր**

...կոխկրտվեցին խաշանց նկատմամբ ունեցած բարեգթությունից, որպեսզի նրանք չճաշակեն օտարների կրուկներով տրորված ճարակը, և չարչարվեցին գառների նկատմամբ տաժած սիրուց, որպեսզի նրանք չընկնեն անհավատների ոտքերով պղտորված ջրերը<sup>48</sup>:

<sup>43</sup> Բարզեն վարդապետ Կիլիսեւեան, «Եղիշէ, Քննական ուսումնասիրութիւն», Վիեննա, 1909 թ., էջ 141:

<sup>44</sup> Անդրիկեան, Արևելեան Վկայք, «Բազմավէպ», 1905, էջ 254:

<sup>45</sup> Գարեգին վարդապետ Ջարդահանալեան, մատենադարան, «հայ. թարգմ. նախնեաց», էջ 44: Տե՛ս նաև Տեր-Մինայան Ե., «Ջգոն» կոչված գրքի հեղինակի հարցը, «Պատմա-բանասիրական հանդես», 1964 թ., № 1, էջ 257—264:

<sup>46</sup> ԳՏՄ, էջ 108:

<sup>47</sup> Ջգոն, Կ. Պոլիս, 1824 թ., էջ 195:

<sup>48</sup> Kmosko-PS, էջ 781: Բերված հատվածը թարգմանված է մեր կողմից:

<sup>39</sup> Եղիշէ, նշվ. աշխ., էջ 189:  
<sup>40</sup> Նույն տեղում, էջ 188:  
<sup>41</sup> Եղիշէ, նշվ. աշխ., էջ 188—189:  
<sup>42</sup> «Ազդարար», 1795 թ., № 8, էջ 191:

Ծնավորնի վկայաբանության և Աֆրաստի երկի հանրեն թարգմանությունների կապը այս հատվածներում ակնհայտ է: Անդրիկյանը ենթադրում է, որ Արրահամը օգտվել է նաև Ագաթանգեղոսի պատմությունից<sup>49</sup>: Ելնելով այս փաստերից, նա որսկս «Վկայք Արևելից» ժողովածուի հայերեն թարգմանության սկզբնական ժամկետ, ընդունում է 453 թվականը<sup>51</sup>: Անդրիկյանի հիմնավորումը շատ տրամաբանական է, որովհետև հաստատվում է նաև մի շարք այլ հանգամանքներով: Մեզ թվում է, որ Արրահամի թարգմանության մեջ նկատելի է Եզնիկի ազդեցությունը, ինչպես, օրինակ, հետևյալ հատվածում. «Ոչ էրեք արարածք Աստուծոյ չար ինչ են բնութեամբ, այլ կամք ազատութեանն փոփոխեն ի պէսպէս չարութիւնս»<sup>51</sup>: Բացի այդ, «Վկայք Արևելից» ժողովածուի հայերեն թարգմանությունը վերլուծելիս, պետք է հաշվի առնել, որ նա առանձնահատուկ տեղ է գրավում հինգերորդ դարի հայ թարգմանական գրականության մեջ: Այդ թարգմանության անհրաժեշտությունը թելադրված է կյանքով, հիսունական թվականների ողբերգական իրադարձություններով: Վարդանանց ապստամբության պարտությունից հետո, Հայաստանում ստեղծվեց ճիշտ այնպիսի փնակ, ինչպես Միջագետքում, դրանից հարյուր տարի առաջ՝ պարսից քրիստոնյաների հալածանքների ժամանակ: Զրադաշտական մոլեռանդությունը այս անգամ ամբողջ ուժով ուղղվեց հայ ժողովրդի դեմ: Հավատափոխության պահանջներ ուղեկցվում էր արյունոտ հաշվեհարդարով: Հայ մտավորականությունը, իհարկե, խիստ մտահոգված էր դեպքերի այդպիսի զարգացումով: Պետք էր բարձրացնել ժողովրդի ոգին, ամրապնդել նրա կամքը: Իսկ դրա համար անհրաժեշտ էին օրինակներ, անկրկնություն և գիտակցված արժանապատվության օրինակներ: Հենց այդպիսի նպատակի կոչված էին ծառայելու «Վկայք Արևելից» ժողովածուի հերոսները: Ժողովածուի հայերեն թարգմանության խոր հեղինակային ոգեշնչումը, հուզական գեղախոսությունը կարելի է բացատրել միմյալն կյանքի այդ ճակատագրական պահանջի գործողությամբ: Պատահական չէ, որ Վարդանանց պատմագիրը՝ Եղիշեն, գտնվում է «Վկայք Արևելից» ժողովածուի ուժեղ ազդեցության տակ: Դա միաժամանակ ապացուցում է, որ Արրահամի թարգմանությունը հասել է իր նպատակին:

Այսպիսով, ամբողջ սավաճից հետևում է, որ «Վկայք Արևելից» ժողովածուի հայերեն թարգմանությունը կատարված է 451 թվականից հետո: Ամենայն հավանականությամբ, Արրահամն իր աշխատանքն սկսել է, երբ արդեն գտնվում էր տաժանակրության մեջ (454 թվականից): Մինչ այդ նա գտնվում էր բանտում և, բնական է, չէր կարող

<sup>49</sup> «Բագմավէպ», 1905, էջ 254: Սակայն նրա բնած օրինակը այս դեպքում համոզիչ չէ:

<sup>50</sup> «Բագմավէպ», 1905, էջ 254:

<sup>51</sup> ԳՏՄ, էջ 79: Ինչպես հայտնի է, Եզնիկի «Եղծ ազանդոց»-ը գրված է 5-րդ դարի 40-ական թվականների վերջին:

գրադվել թարգմանություններով: Թարգմանությունն ավարտված է 463 թվականից ոչ ուշ, քանի որ միայն այդ աշխատանքն իրագործելուց հետո Արրահամը կարող էր համաձայնել՝ վերադառնալ հայրենիք: Պետք է հիշեցնել, որ Արրահամը Հայաստան ուղարկվեց հայ ժողովրդին միաթարկու առաքելությամբ: Իսկ այդ միաթարկությունների մեջ, իհարկե, ամենաազդեցիկը «Վկայք Արևելից» ժողովածուի թարգմանությունն էր:

\* \* \*

Հայագիտության մեջ ավելի բուռն տարածայնությունների տեղիք է տվել Արրահամի գրական ժառանգության մասին Թովմա Արծրունու մի այլ հաղորդում: Նրա պատմության երկրորդ դպրության առաջին գլխում պատմվում է, որ պարսից Պերոզ թագավորի օրոք դավաճան Ծավապ Արծրունու օգնությամբ Հայաստանում մարգարան է նշանակվում մոգպետ Վնդոն: Սա սկսում է քանդել եկեղեցիները, հալածել հոգևորականներին, ծանրաբեռն հարկապահանջությամբ հարստահարել ժողովրդին և այլն: Բացի այդ, Վնդոն Դվինում կառուցում է մի մեհյան<sup>52</sup>: Լսելով այդ մասին, մեծն Վարդան Մամիկոնյանը գորք է հավաքում և անակնկալ հարձակմամբ հանկարծակիի բերում թշնամիներին: Նա անձամբ թրատում է Ծավապին, իսկ Վնդոյին և նրա որդի Ծիրոյին ողջակիզում են Դվինի մեհյանում: Այս մեհյանը քանդում են և տեղը եկեղեցի կառուցում, ուր տեղափոխվում է Գյուտ կաթողիկոսի նստավայրը: Այսպիսի հաջող ելույթից հետո հայ նախարարները ուզում են մի ուրիշ Արծրունու՝ քաջախորհուրդ և իմաստնախորհ Վահանին «թագաւորեցուցանել ի վերայ Հայոց»: Սակայն ներքին տարածայնությունների պատճառով որոշում են ի կատար չի ածվում: Նախարարները, այդ թվում նաև Վահան Արծրունին, հավաքվում են Վարդանի շուրջը, նրան շնորհում «զվերակացութիւն Հայոց, և եղևն հնազանդեալ նմա զամենայն աւուրս Վարդանայ»: Այնուհետև պատմվում է Վահանի սխրանքների մասին, որ նա գործում է Վարդանի կողքին, Ավարայրի ճակատամարտում: Նրանք միասին էլ քաջամար գոհվում են ուզվի դաշտում: Այս պատմության վերջում Թովման ավելացնում է. «Եւ պատմի այս ի համատուութեան Արրահամու Խոստովանողի»<sup>53</sup>:

Թովմայի այս վկայությունը հայագետների կողմից ստացել է տարբեր մեկնաբանություններ: Զարպիսանյանը, Կոտսանյանը, Զամինյանը, առանց հատուկ ընկունության ընդունելով Թովմայի հավատարմությունը, կար-

<sup>52</sup> Ըստ Թովմայի Պատմության հրատարակության (էջ 78). «Եւ հասեալ Ծաւապայ Արծրունույ ամբարշտի յԱրտաշատ հանդերձ մարգարանաւ՝ շինեն ի դուն քաղաքին գործդական մեհեանն»: Մեզ թվում է՝ պետք է ուղղել. «ի Դունի քաղաքին»: Այդ ապացուցվում է Թովմայի պատմության հետագա ընթացքով և Դրասխանակերտցու վկայությամբ, ըստ որի Վնդոն մեհյանը կառուցեց Դվինում: (Պատմ. Հայոց, Թիֆլիս, 1912 թ., էջ 59):

<sup>53</sup> Թովմայ Արծրունի, Պատմութիւն..., էջ 77—80:

ծում են, որ Աքրահամ Խոստովանողը իսկապես գրել է մի ինքնուրույն պատմական աշխատություն՝ Վարդանանց պատերազմի իրարարձությունների մասին<sup>54</sup>:

Կյուլեսերյանը և Հացունին, ընդհակառակն, հերքում են Թովմայի վկայությունը և աշխատում ապացուցել, որ Աքրահամը ոչ մի «Համառոտություն» էլ չի գրել: Առաջինի կարծիքով, «Համառոտություն» վերնագրի տակ Թովման ի նկատի ունի Աքրահամի «Վկայք Արևելից» ժողովածուի մի մասը՝ Շմառնի և Գոշթազդի վկայաբանությունը<sup>55</sup>: Սակայն հարցի այսպիսի հեշտ լուծումը Կյուլեսերյանի կողմից որևէ կերպ չի հիմնավորված: Նախ Թովմայի վերոհիշյալ պատմությունը անհնարին էր քաղել Շմառնի վկայաբանությունից, քանի որ նրանց միջև ոչ մի կապ էլ չկա, և երկրորդ, Թովման այնպես լավ գիտեր Աքրահամի «Վկայք Արևելից»-ը, որ չէր կարող այն շփոթել որևէ այլ աշխատության հետ:

Ըստ Հացունու, Աքրահամը չէր կարող լինել Թովմայի օգտագործած աղբյուրի հեղինակը, քանի որ վերոհիշյալ պատմության մեջ նկարագրված դեպքերը վերաբերում են ոչ թե Վարդանանց, այլ Վահանյանց ժամանակին, և Վարդան մեծին վերագրված են իր եղբորորդու՝ Վարդ Մամիկոնյանի գործերը: Իսկ դեպքերի և դեմքերի այսպիսի շփոթություն հնարավոր չէր հիմնգործող դարում: Այս տեսությունն ապացուցելու համար Հացունին իր դատողությունների շրջանակն է ներգրավում նաև Մեսրոպ Երեցի՝ Ներսեսի Վարքի 10-րդ դարի քաղաքի, հետևյալ հաղորդումը. «Ես Մեսրոպ Նուսատ քահանայ... ծաղկաքաղ արարի զգիրքս զայս ի Հայոց մնացորդաց յԱրեւելից գրոց. զպաղտութիւն և զվատթարութիւն թագաւորացն Հայոց և Վրաց, և զառաքինութիւն և զքաջաչելիս հայրապետաց տոհմից սրբոյն Գրիգորի Լուսաորչին և զտեսի ի զկտակ // սրբոյն Ներսէսի, և զքաջութիւն և զպաղտութիւն արիական ազգին Մամիկոնէից... Եւ արդ զայս հանեալ յԱրևելից գրոց ի Հայոց մնացորդացն պատմութեանց»<sup>56</sup>:

Համադրելով այս տվյալները, Հացունին հանգում է հետևյալ եզրակացությունների<sup>57</sup>:

— Գոյություն է ունեցել «հաւաքածոյ զանազան պատմութեանց», «Գիրք Արևելից» ընդհանուր վերնագրով: Սա պարունակել է Աքրահամի «Վկայք Արևելիցը» և «Մնացորդք Հայոց պատմութեանցը», որը Թովման սխալմամբ անվանում է «Համառոտություն Աքրահամու Խոստովանողի»<sup>58</sup>:

<sup>54</sup> Գ. Վ. Զարպհանալեան, Հայկական հին դարերի մասին, Վենետիկ, 1877, էջ 296. Կոստանեան, Հիւսնաճք, գիրք Գ, Վիեննա, 1877, էջ 175: Զամիենեան, Եղիշէ վարդապետ, «Սիօն», 1934 թ., էջ 150—153:

<sup>55</sup> Բ. Վ. Կիւլեսերեան, Եղիշէ, էջ 144:

<sup>56</sup> Մփերը Հայկական, Բ. 2, էջ 138—139:

<sup>57</sup> Հ. Վարդան Հացունի, Խորհրդածութիւնք Եղիշէի պատմութեան վերայ, Վենետիկ 1896, էջ 168—170, 202—206:

<sup>58</sup> «Համառոտութեան» և «Մնացորդաց» նույնությունը ընդունում է նաև Ալիշանը. Հայապատում,

— Այս պատմական երկը Մեսրոպին ընծայել է ստույգ և շահեկան տեղեկություններ, իսկ Թովմային՝ Վահանի վարքի կեղծիքը: Ուստի պետք է ենթադրել, որ Մեսրոպի արժանահավատ աղբյուրին հինգերորդ դարից հետո կցվել կամ խառնվել է նրա մեջ Արծրունիների սխալմամբի ստասպելը, որից օգտվել է Թովման:

Ի տարբերություն Հացունու, Գ. Տեր-Պողոսյանը առասպելական համարում է միայն Վարդանի, Ծավասպի, Վնդոյի և Ծիրոյի պատմությունը, որը Թովման քաղել է ժողովրդական բանահյուսությունից, իսկ Աքրահամ Խոստովանողի համառոտությունը Թովմային տեղեկություններ է տվել Վահան Արծրունու մասին<sup>59</sup>:

Համարյա նույն հայացքն է պաշտպանում նաև Նորայր Բյուզանդացին: Ըստ նրա «Աքրահամ թուի թէ գրած է նաև համառոտ Պատմութիւն մի Վարդանանց պատերազմին, յորմէ կ'առնու Թովմայ Արծրունիի զբաջօրէն մամ Վարդանայ Մամիկոնէնի և Վահանայ Արծրունւոյ»<sup>60</sup>:

Ինչպես տեսնում ենք, մեր առջև դրված է մի բարդ և խառնաշփոթ խնդիր, որի ճիշտ լուծման համար անհրաժեշտ է նախապես անել հետևյալ դիտողությունները.

ա) Թովմայի վերոհիշյալ պատմության մեջ Հացունու նկատած տարածամությունը իսկապես առկա է: Դեպքերը տեղի են ունենում Պերոզի օրոք (459—484), մինչդեռ Վարդան Մամիկոնյանը զոհվել էր արդեն 451 թվականին: Պետք է ասել, որ սա ժամանակների պատահական շփոթում չէ, քանի որ Թովմայի պատմածում հիշատակվում է նաև Գյուտ կաթողիկոսը, որը գլխավորել է հայ եկեղեցին 461—478 թվականների ընթացքում: Սակայն, մեր կարծիքով, Հացունին սխալվում է Վարդանին նույնացնելով Վարդ Մամիկոնյանի հետ: Վարդանի կերպարում առկա Վահանյանական է ենթադրել Վահան Մամիկոնյանին, որովհետև լինելով, որ «տալ նմա զվերակացութիւն Հայոց» խոսքերը ակնարկում են նրա՝ մարգարան նշանակվելը:

Պատմական անձանց գործերի շփոթումը, ընդհանրապես, հատուկ է ժողովրդական բանահյուսությանը կամ իրարարձություններից հետո ժամանակների պատմագրությանը: Եվ այս, և այն դեպքում, Աքրահամը չէր կարող լինել այսպիսի անստույգ աղբյուրի հեղինակը: Ավելին, Վահանյանց ապստամբության ժամանակ (481—484 թթ.) նա վաղուց արդեն մեռած պետք է լիներ:

բ) Տեր-Պողոսյանի և Նորայրի կարծիքը, ըստ որի Թովման Աքրահամի «Համառոտությունից» տեղեկություններ է քաղել միայն Վահան Արծրունու մասին, հիմնավորված չէ որևէ փաստով, կամ թեկուզ տրա-

վենետիկ, 1901 թ., մասն Ա, էջ 45:

<sup>59</sup> Տեր-Պողոսեան Գ., Նկատողութիւններ Եղիշէի պատմութեան վերաբերեալ, «Հանդէս ամսօրեայ», 1896 թ., էջ 130—132:

<sup>60</sup> Նորայր, Կորին Վարդապետ և նորին թարգմանութիւն, Թիֆլիս, 1900 թ., էջ 475—476:

մարանական ենթադրությամբ: Այս հարցում իրավացի է Հացունին, որը Թովմայի ամբողջ վերահիշյալ պատմության համար ճանաչում է մի աղբյուր:

գ) Մեարոպ Երեցի վկայության ներգրավումը «Համատոության» խնդրի լուծման համար պետք է համարել ավելորդ: Այստեղ Հացունու տեսությունը քրե-նադատության չի դիմանում: Նախ, անտրամարանական է իրար հետ բոլորովին կապ չունեցող երկերի՝ «Վկայք Արևելիցի» և «Մնացորդաց պատմութեանց» միացումը մի ժողովածուում՝ ընդհանուր վերագրի տակ: Երկրորդ, եթե նույնիսկ ենթադրվի այդպիսի համատեղություն, ապա Արքահամի թարգմանության հետ, որը մեզ հասել է համարյա ամբողջությամբ, պետք է պահպանված լինեին գոնե առանձին մասեր «Մնացորդաց պատմութիւնից»:

Չի կարելի համաձայնել նաև Ալիշանի կարծիքին, ըստ որի «Մնացորդաց պատմութեանց» և «Համատոության» տակ ենթադրվում է մի՛ և նո՛ւյն աշխատություն, որի հեղինակն է Արքահամը<sup>61</sup>: Այս դեպքում հարցական է մնում, թե ինչու Թովման այդ աղբյուրից վերցնում է միայն անստույգ և մտացածին տեղեկություններ և բոլորովին անտեսում է «Մնացորդաց» արժանահավատ պատմությունը:

Այսպիսով, այս դիտողություններից և բացատրումներից հետո մնում է բացատրել Թովմայի հավատումը Արքահամ Խոստովանողի «Համատոության» մասին:

Հայտնի է, որ Թովման կատարելով իր պատվիրատուների՝ Արծրունի իշխանների ցանկությունը, օգտվել է նրանց ճախնիների սխարանքները պատմող բանավոր առասպելներից<sup>62</sup>: Սակայն Վարդանի, Վնդռնի, Ծավասայի և Վահանի պատմությունը չի կարելի վերագրել այդպիսի աղբյուրների թվին: Այն,

ինարևել, ծագում է ժողովրդական բանահյուսությունից, բայց Թովմային հասել է արդեն գրավոր վիճակում՝ Արքահամ Խոստովանողի անունով: Հակասակ դեպքում անհասկանալի կմնա այդ աղբյուրի հիշատակումը Թովմայի կողմից<sup>63</sup>: Անկասկած է, որ Թովման օգտվել է Արքահամի անունը կրող ինչ-որ պատմական աշխատությունից: Հիշյալ պատմվածքի բնույթը դուռն չի ապացուցում այդ աշխատության բոլոր մասերի անվավերականությունը: Այնպես որ Թովմայի հաղորդման հակասությունները չեն բացառում որևէ պատմական երկի՝ Արքահամին պատկանելու հնարավորությունը: Հինգերորդ դարի մյուս թարգմանիչների՝ Մեսրոպի, Սահակի, Կորյունի, Եզնիկի, Խորենացու նման՝ Արքահամ Խոստովանողը նույնպես կարող էր ունենալ ինքնուրույն ստեղծագործություններ: Նա գտնվում էր Վարդանանց ապրտամբության իրադարձությունների կենտրոնում և, բացի այդ, օժտված գրող էր, այսինքն ուներ համապատասխան պատմական աշխատություն գրելու բոլոր տվյալները:

Արքահամի պատմագրելու հնարավորության մասին է վկայում նաև Տաշյանի հետևյալ հաղորդումը. «Արքահամու անունն ուրիշ պատմութեանց վրայ այ կը տեսնուի, ի միջի այլոց Պատմութեանց հաւաքման մը վրայ»<sup>64</sup>:

Այսպիսով, հայ մատենագրության տվյալներից կարելի է միայն արձանագրել Արքահամի կողմից Վարդանանց պատերազմի մասին պատմական աշխատություն հեղինակելու փաստը: Ավելին պարզել առայժմ կարելի չէ: Անհայտ է թե Արքահամի Պատմության բուն բովանդակությունը և թե նրա թողած ազդեցությունը հայ պատմագրության վրա:

<sup>61</sup> Հ. Ղ. Ալիշան, Հայաստան, Վեներտիկ, մասն Ա, էջ 45:

<sup>62</sup> Տես, Արեղյան Մ., Երկեր, հ. 3, Հան հեռ. քննարկության պատմություն, Երևան, 1968 թ., էջ 495:

<sup>63</sup> Այդ աղբյուրի գրավոր լինելը ապացուցվում է նաև այն բանով, որ նրանից օգտվել է նաև Հ. Դրասխանյանը (Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1919 թ., էջ 59):

<sup>64</sup> Բ. Վ. Կիւլեւերեան, Եղիշէ, էջ 145:

